ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2291Ա

27 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24.06.2023Թ. ԹԻՎ 69Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 24.06.2023թ. թիվ 69Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
հիմնական և եզրափակիչ մասերում նշված «0.0062հա» բառերի փոխարեն կարդալ «0.0006հա» բառերը
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 2292-Ա

«27» դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԼԱԴԻՄԻՐ ՕԹԱՐԻ ՌԱՖԱԵԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ս.թ. դեկտեմբերի 13-ի Ադրբեջանը վերադարձրել է 32 հայ ռազմագերիների, որոնց թվում էր Վաղարշապատ համայնքի Պատկանյան 6 շենքի 11 բնակարանի բնակիչ Վլադիմիր Օթարի Ռաֆաելյանը: Ընտանիքը գտնվում է սոցիալապես ծանր պայմաններում, և Վաղարշապատի համայնքապետարան է դիմել ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտությունից ելնելով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Վաղարշապատ համայնքի 2023թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի Պատկանյան 6 շենքի 11 բնակարանի բնակիչ Վլադիմիր Օթարի Ռաֆաելյանին հատկացնել 150000 դրամ դրամական :
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 22934

«27» դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 10 <<ՈՍԿԵՀԱՏ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 24-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020թ. մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 10 <<Ոսկեհատ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ ՀՈԱԿ) առկա է տնօրենի թափուր պաշտոն, իսկ դրա համալրումը անհրաժեշտ է ՀՈԱԿ-ի լիարժեք աշխատանքային գործունեության համար

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2024 թվականի հունվարի 30-ին Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 10 <<Ոսկեհատ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ:
2. Ապահովել անցկացվող մրցույթի հայտարարության հրապարակումը http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, տարածքային կառավարման և ենթակատուցվածքների նախարարության, ՀՀ Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև Վաղարշապատի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքերում և փակցնել համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:
3. Տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացման անմիջական պատասխանատու նշանակել աշխատակազմի քարտուղարին:
4. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմերին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22944

27 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՍԵՐՈԲ ԳՐԻԳՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Սերոբ Գրիգորի Հովհաննիսյանի լիազորված անձ՝ Արմինե Գրիգորի Հովհաննիսյանի դիմումը պարզվեց, որ սեփականության իրավունքով Սերոբ Գրիգորի Հովհաննիսյանին պատկանող /հիմք՝ սեփականության վկայագիր տրված 08.03.1996թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 20.11.2023թ. կազմված հատակագիծ, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մ. Նալբանդյան փողոցի թիվ 4ա հասցեում գտնվող 0.0275 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը, որի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Մ. Նալբանդյան փողոցի թիվ 4ա հասցեում գտնվող 0.0275 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, որի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Սերոբ Գրիգորի Հովհաննիսյանի /ծնված 09.10.1985թ./ սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2295-Ա

27 դեկտեմբերի 2023թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Սերոբ Գրիգորի Հովհաննիսյանի լիազորված անձ՝ Արմինե Գրիգորի Հովհաննիսյանի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքում գտնվող 04-002-0086-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ սեփականության վկայագիր տրված՝ 08.03.1996թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040024C99QZD/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Մ. Նալբանդյան փողոց թիվ 4/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2296Ա

27 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 116 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 3-րդ թաղամասի թիվ 116 տան բնակիչ Արկադի Նիկոլայի Կոչերգինի դիմումը պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 17.10.2017թ, տրված թիվ 17102017-04-0031 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 28.11.2023թ կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023CRCU7W և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002HE9BR3C / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 3-րդ թաղամասի թիվ 116 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 593.2քմ / արտաքին 593.2քմ, ներքին 482.1քմ / մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքաշինական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 3-րդ թաղամասի թիվ 116 հասցեում գտնվող 0.048հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 593.2քմ / արտաքին 593.2քմ, ներքին 482.1քմ / մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 1 168 011 / մեկ միլիոն հարյուր վաթսունութ հազար տասնմեկ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2297-Ա

27 [illegible] 2023թ. ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի թաղամասի թիվ 116 տան բնակիչ՝ Արկադի Նիկոլայի Կոչերգինի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զորավոր Անդրանիկի թաղամասի թիվ 116 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 17102017-04-0031 տրված՝ 17.10.2017թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002HE9BR3C/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Զորավար Անդրանիկի 3-րդ թաղամաս թիվ 116 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 2298-Լ

«27» դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, և հիմք ընդունելով Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ համայնքի տոնական տեսքն ապահովելու համար օրգանական ապակուց, լեդ լույսերով զարդարանքներ ձեռք բերելու նպատակով .

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝**

1. Վաղարշապատ համայնքի 2023թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 200.0 հազ. դրամ փոխանցել Ջելի Գլաս ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ**
**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22394

27 հունիսի 2023թ. ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 203/13 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 1 ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՋԵՐՄԱՏԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Աղվան Ռաֆիկի Առաքելյանի լիազորված անձ Կարեն Հարութի Վարդանյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Աղվան Ռաֆիկի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 18.05.2005թ. տրված թիվ 1499382 սեփականության վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 29.05.2023թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023877RZR և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002RZD7BQS / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 203/13 հասցեում գտնվող 0.0367հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 67քմ / 67քմ արտաքին, ներքին 61.2քմ / բնակելի տունը և ինքնակամ բացված թվով 1 դուռը օրինականացնելու, հողամասի և ջերմատան նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման , ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման և ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 203/13 հասցեում գտնվող 0.0367հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշման, Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՈ/344-2022 որոշման պահանջներին և համարել փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության:
2. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 203/13 հասցեում գտնվող ջերմատան նպատակային նշանակությունը փոփոխել բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի տան:
3. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 203/13 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 67քմ / 67քմ արտաքին, ներքին 61.2քմ / բնակելի տունը և ինքնակամ բացված թվով 1 դուռը ճանաչել օրինական, որի համար սահմանված 133 892 / հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր իննսուներկու / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ     Թ Ի Վ 23004

27 Սեպտեմբերի 2023թ.                                                                                     ք.Էջմիածին

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Աղվան Ռաֆիկի Առաքելյանի լիազորված անձ՝ Կարեն Հարութի Վարդանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Ծաղկեփունջ» ԳԿՏ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝սեփականության իրավունքի վկայական թիվ 1499382 տրված՝ 18.05.2005թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04002RZD7BQS/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին թիվ 203/13 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝     Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2301Ա

28 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37 ՇԵՆՔԻ ԹԻՎ 31 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 37 շենքի թիվ 31 բնակարանի բնակիչ Վահրամ Հրաչիկի Եղիազարյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն և Լիաննա Սուրիկի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 19.04.2017թ. տրված թիվ 19042017-04-0007 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 25.10.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023KFVTWD /, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 37 շենքի թիվ 31 բնակարանին կից ինքնակամ կառուցված 32.7քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 37 շենքի թիվ 31 բնակարանին կից ինքնակամ կառուցված 32.7քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 22 720 / քսաներկու հազար յոթ հարյուր քսան / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Շինությունների հատակագիծ էջում նշված պատուհանը համարել ինքնակամ:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2302-Ա

28 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

### ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ա.ԹԱՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԾԱԾԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Թամանյան փողոցի թիվ 19 տան բնակիչ Գուրգեն Անդրանիկի Մնացականյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 30.12.2007թ. տրված թիվ 2492471 սեփականության վկայական, «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296 / կողմից 30.11.2023թ. կազմված հատակագիծ և Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023QBNRWP / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Թամանյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 0.0467հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 266քմ / 266քմ արտաքին, ներքին 214.6քմ / մակերեսով բնակելի տունը և ծածկը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Թամանյան փողոցի թիվ 19 հասցեում գտնվող 0.0467հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված ընդհանուր 266քմ / 266քմ արտաքին, ներքին 214.6քմ / մակերեսով բնակելի տունը և ծածկը ճանաչել օրինական, որի համար սահմանված 523 754 / հինգ հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր հիսունչորս / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ու Մ  Թ Ի Վ 2303-Ա

«28» դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ 2-ՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ 4-ՐԴ ՀԱՐԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԴԻՄԱՑ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ, 469-րդ և 624-րդ հոդվածներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.3-րդ մասի «Արմավիրի մարզի համայնքներն ու բնակավայրերը» ցանկի 2-րդ կետը և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասը, հիմք ընդունելով Էջմիածին համայնքի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության) միջև 25.11.2021թ. /սեղանամատյան 6661/ կնքված տարածքի վարձակալության պայմանագրի 4.2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պետ՝ Ա.Նիկողոսյանի դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կողմից վարձավճարը վճարել է պատշաճ և ժամանակին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Երկարաձգել 25.11.2021թ. /սեղանամատյան 6661/ կնքված Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին քաղաքի Մ.Մաշտոցի 0 հասցեում Վաղարշապատի համայնքապետարանի վարչական 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում գտնվող տարածքների վարձակալության պայմանագրի ժամկետը մինչև 2025 թվականի դեկտեմբերի 27-ը և կնքել վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

2.Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Պայմանագրի 4.1 /չորսի մեկ/ կետը փոխել՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <<Վարձակալության պայմանագրի ժամկետը սահմանվում է մինչև՝ 2025 թվականի դեկտեմբերի 27-ը:>>

3. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:

4. Հանձնարարել իրավաբանական բաժնին նոտարական գրասենյակում կնքելու և ստորագրելու Վաղարշապատ համայնքի և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության) միջև վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիրը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 2304Ա

28 դեկտեմբերի 2023 թ.  ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ասատուր Բենիկի Ասատրյանի լիազորված անձ՝ Նաթելա Արեստի Գաբրիելյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 891945 տրված՝ 13.08.2003թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04081JBJ3RML/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք գյուղ Ոսկեհատ, 16-րդ փողոց թիվ 3 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝  Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Թ Ի Վ 2305Ա

28 դեկտեմբերի 2023թ.     ք.Էջմիածին

### ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՂԴԱՍԱՐ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 103/23 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 3 հասցեին կից Բաղդասար Վոլոդյայի Բաղդասարյանի կողմից առանց համապատասխան թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

Բաղդասար Վոլոդյայի Բաղդասարյանի /հասցե՝ ք. Էջմիածին, Թումանյան փողոց, թիվ 3 տուն, անձնագիր՝ BA0400801, Ն/ք՝001622208/ կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 3 հասցեին կից կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի 11.12.2023 թվականին կազմված թիվ ՄՄ 30 արձանագրության հիման վրա 2023 թվականի դեկտեմբերի 11-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում, որի մասին Բաղդասար Վոլոդյայի Բաղդասարյանը պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

- Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 11.12.2023 թվականին կազմված թիվ ՄՄ 30 արձանագրությունը և լուսանկարը:
- Հանձնաժողովի 26.12.2023թ. թիվ 103/23 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Բաղդասար Վոլոդյայի Բաղդասարյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 3 հասցեին կից առանց համապատասխան թույլտվության իրականացրել է բացօթյա առևտուր (տեղադրել է սուրճի ապարատ):

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ին Վաղարշապատի համայնքապետարանում հրավիրվել է լսում, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Բաղդասար Վոլոդյայի Բաղդասարյանը /հիմք՝ փոստային ծանուցագիր ALO115885531AM/:

Բաղդասար Վոլոդյայի Բաղդասարյանը, չնայած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելով 2023 թվականի դեկտեմբերի 26-ին համայնքապետարանում հրավիրված վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն

աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա։

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար։

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $5^1$-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ բացօթյա առևտուր կարող են իրականացնել միայն օրենսդրությանը համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվություն ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը։

Թույլատրվում է միայն ծաղիկների, տնկիների, ամանորյա տոնակատարությունների համար նախատեսված եղևնիների և սոճիների, պաղպաղակի, ջրի, այդ թվում՝ հանքային, հյութերի և զովացուցիչ ըմպելիքների բացօթյա առևտուրը։

Այսինքն՝ Բաղդասար Վոլոդյայի Բաղդասարյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 3 հասցեին կից առանց համապատասխան թույլտվության իրականացրել է բացօթյա առեվտուր։

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 3-րդ մասով, 23-րդ և 32-րդ հոդվածներով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի $5^1$-րդ հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բաղդասար Վոլոդյայի Բաղդասարյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ առանց թույլտվության բացօթյա առևտուր իրականացնելու համար՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով՝ առանց առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավման։

2. Նախազգուշացնել Բաղդասար Վոլոդյայի Բաղդասարյանին, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի իննսունապատիկից մինչև հարյուրտասնապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա::

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում։

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2306-Ա

28 սեպտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 179 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Երևան քաղաքի Ս.Խանզադյան փողոցի թիվ 1 տան բնակիչ Օսան Մայիսի Սնդոյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն, Մայիս Վաչագանի Սնդոյանին, Նվարդ Սիրեկանի Աբրահամյանին, Հովհաննես Մայիսի Սնդոյանին և Հասմիկ Մայիսի Սնդոյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝03.11.2003թ. տրված թիվ 1270520 սեփականության վկայական, «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 08.05.2023թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023Y82BVL և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 0408172ZDMFA / Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոցի թիվ 179 հասցեում գտնվող 0.1159հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 105քմ /արտաքին 105քմ, ներքին 82.2քմ/ մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի Բարեկամության փողոցի թիվ 179 հասցեում գտնվող 0.1159հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 105քմ /արտաքին 105քմ, ներքին 82.2քմ/ մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված 126 945 / հարյուր քսանվեց հազար ինը հարյուր քառասունհինգ / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 2307Ա

28 դեկտեմբերի 2023 թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Երևան քաղաքի Ս. Խանզադյան փողոցի թիվ 1 տան բնակիչ՝ Օսան Մայիսի Մնդոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1270520 տրված՝ 03.11.2003թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 0408172ZDMFA/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, Բարեկամության փողոց թիվ 179 բնակելի տուն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2308Ա

28 դեկտեմբերի 2023թ.                                                          ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 12.05.2022թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002PQWESFZ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Գ.Նարեկացու փողոցում գտնվող 0.0128հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Գ.Նարեկացու փողոց թիվ 46/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ                                        Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2309-Ա

28 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ավագ Ավագյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0331 / կողմից 06.06.2023թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002LVSUQHR.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամասում գտնվող 0.008հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Զորավար Անդրանիկի 2-րդ թաղամաս թիվ 46/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ .ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2310-Ա

28 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 7/1 հասցեում գտնվող 0.0405հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանեցնել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 8 և Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ գյուղի գլխավոր հատակագծերի նախագծերը /գոտևորման նախագծերը/ հաստատելու մասին ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 26.04.2022թ. առաջին նստաշրջանի արտահերթ առաջին նիստի թիվ 80 որոշման, Արմավիրի մարզպետի 19.05.2022թ. թիվ ՄՌ/344-2022 որոշման պահանջներին և համարել փոփոխված բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2311Ա

28 դեկտեմբերի 2023թ. ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի / որակավորման վկայական թիվ 0390 / կողմից 25.04.2023թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04002LLETWXH.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

